ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

<< >> _____ 2018թ. ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

N: _____ հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՈՒՂԵՐՁ

ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Հարգելի հայրենակիցներ

Ջերմորեն շնորհավորում եմ բոլորիս Հաղթանակի և Խաղաղության տոնի կապակցությամբ:

Այսօր մենք բազմաթիվ պետությունների հետ միասին տոնում ենք ֆաշիզմի դեմ տարած հաղթանակը: Մայիսի 9-ը մեր պապերի, հայրերի պատմական հաղթանակների միասնական տոնն է: Այն ամրագրվեց սերունդների հիշողության մեջ որպես Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտ և նշանավորվեց որպես խաղաղ ու ստեղծարար աշխատանքի նոր սկիզբ: Հայ ժողովրդի հարյուր հազարավոր զավակներ պատերազմի առաջին օրերից սկսած իրենց հերոսական պայքարով մոտեցրին հաղթական ավարտը՝ չխնայելով իրենց կյանքը:

Մայիսը մեզ համար հաղթանակների ամիս է եղել դարեր շարունակ, այս տարի նշում ենք Հայաստանի Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100 ամյակը, իսկ մայիսյան նորօրյա ձեռքբերմամբ՝ Շուշիի ազատագրումով, մենք մեզ համար վերահաստատեցինք հաղթական մայիսի նոր իմաստը: Այն դարձավ հայ ժողովրդի վճռականության, ինչպես նաև ազատ ու խաղաղ ապրելու խորհրդանիշ:

Մենք խոնարհվում ենք բոլոր հայրենասեր, արցախյան ազատամարտի և մերօրյա հերոս այն հայորդիների առջև, ովքեր իրենց կյանքը նվիրաբերեցին հանուն հայրենիքի անկախության վեհ գաղափարի:

Մեծ Հայրենականի վետերաններին, Արցախյան պատերազմի մասնակիցներին, Ապրիլյան պատերազմի հերոսներին ու բոլորիս Հաղթանակի և խաղաղության օրվա կապակցությամբ ցանկանում եմ քաջառողջություն, երջանկություն, տոնական բարձր տրամադրություն և խաղաղ երկինք:

Ս.ՊԵՏՐՈՍՅԱՆ

/ պարտականությունները կատարող/